

Կարծիք

Ամալյա Բաբկենի Պետրոսյանի «Գերմաներեն բնագրերի ընթերցանության բովանդակության ստուգման ռազմավարությունը ոչ լեզվական ֆակուլտետում» խորագրով ԺԳ. 00.02 «Ղասավանդման և ուսուցման մեթոդիկա» / գերմաներեն լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Մասնագիտական կողմնորոշման գերմաներենի դասընթացում օտար լեզվի ուսուցման արդյունավետ միջոց է համարվում ընթերցանությունը: Մի կողմից՝ գոյություն ունեն բավականին արդյունավետ օտարալեզու տեքստերի ընթերցանության մեթոդական համակարգեր: Մյուս կողմից՝ օտար լեզուների ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները հարացուցային փոփոխություններ են մտցնում ընթերցանության կազմակերպման ոլորտում: Օտարալեզու մասնագիտական կողմնորոշման տեքստի շուրջ աշխատանքի ռազմավարությունների զարգացման շարժընթացը դժվար է մի հետազոտության շրջանակներում ներկայացնել: Սակայն փաստ է այն, որ արդի փուլում աշխատաշուկայի կարևորագույն պահանջներից մեկը երկու և ավել օտար լեզուների իմացությունն է՝ թե՛ միջանձնային, թե՛ միջմշակութային հաղորդակցություն իրականացնելու համատեքստում: Ատենախոսը ճիշտ է նկատում, որ առարկայական չափորոշիչներում և ծրագրերում ներկայացված պահանջներն ամբողջությամբ չեն արտացոլում ընթերցանության առանձին տեսակների և դրանց առանձնահատկությունների ուսուցման խնդիրները:

Ամալյա Պետրոսյանը փորձում է մշակել տեքստի ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ուսուցման մեթոդական համակարգ:

Հեղինակին հաջողվել է բացահայտել ծանոթացնող ընթերցանության առանձնահատկությունները, սահմանել տվյալ տիպի ընթերցանության կարողությունների ստուգման օբյեկտները, մշակել տեքստերի բովանդակության ստուգման մեթոդական համակարգ: Դրական է այն, որ նա չի առանձնացնում ուսուցման և գնահատման ընթացակարգերը: Պատահական չէ, որ իրականացրել է ընթերցանության թեստավորում՝ տեքստի ընդհանուր բովանդակության ընկալումը ստուգելու նպատակով, և

փորձարարական ուսուցման կազմակերպման միջոցով հիմնավորել է իր կողմից մշակված ստուգման թեստային համակարգի արդյունավետությունը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ծավալը համակարգչային շարվածքով 111 էջ է:

Ատենախոսության՝ «Ընթերցանության՝ որպես ընկալողական խոսքային գործունեության մեթոդական հիմքերը» խորագրով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ «Ժամանակակից լեզվակրթության քաղաքականության սկզբունքները» ենթագլխում ատենախոսը հանգամանորեն ներկայացնում է Եվրախորհրդի լեզվակրթության քաղաքականության սկզբունքները, «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ»-ում մշակված՝ լեզվի տիրապետման մակարդակների համընդհանուր համակարգը: Նկարագրելով մշակված համակարգը, ատենախոսը կարևորում է լեզուների իմացության մակարդակները, թե՛ օտար լեզվի ուսուցման խմբեր ձևավորելու, թե՛ նրանց ընթերցանությունը արդյունավետորեն կազմակերպելու տեսանկյուններից:

Երկրորդ՝ «Ընթերցանության՝ որպես ընկալողական (ռեցեպտիվ) խոսքային գործունեության ուսուցման նպատակները» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է մասնագիտական կողմնորոշման տեքստի ընթերցանության ուսուցման նպատակը, խնդիրները, սահմանում է «լեզվական իրազեկություն», «հանրալեզվաբանական իրազեկություն», «գործաբանական իրազեկություն» հասկացությունները, ընթերցանության տեսակները:

Երրորդ՝ «Ընթերցվող տեքստի ընդհանուր բովանդակության ընկալման առանձնահատկությունները» ենթագլխում ատենախոսը բացահայտում է ընթերցանության տեսակներից մեկի՝ ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության առանձնահատկությունները: Նա սահմանում է ընթերցանության տեսակները, բացահայտելով համապատասխան կոմպետենցիաները:

Ատենախոսության՝ «Ոչ լեզվական բուհերի ուսանողների՝ ընթերցանության ընկալման ստուգման առանձնահատկությունները» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին՝ «Ստուգումը որպես սովորողների ընթերցանական կարողությունների գարգացման աստիճանի ցուցանիշ» ենթագլխում ատենախոսը սահմանում է «ստուգում» հասկացությունը, բացահայտում է ստուգման

նպատակները, ստուգման և գնահատման բովանդակային կապը, վերլուծում է «շարժառիթ», «ստուգում» և «կատարում» հասկացությունները:

Երկրորդ՝ «Ստուգման և գնահատման չափանիշները» ենթազխում ատենախոսը ներկայացնում է տեքստի բովանդակության ընկալման ստուգման և գնահատման չափանիշները: Ամալյա Պետրոսյանը խնդիր է դնում ստուգել ուսուցանվող լեզվի գործնական տիրապետման մակարդակը, հետապնդելով լեզվական նյութի յուրացման նպատակ: Նա հստակ օրինակներով հաստատում է թեստավորման անհրաժեշտությունը և արդյունավետությունը, սովորողների խոսքային գործունեության մակարդակը ստուգելու գործընթացում:

Երրորդ՝ «Ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ստուգման օբյեկտները» ենթազխում ատենախոսը հանգամանորեն վերլուծում է ընթերցանության ստուգման օբյեկտները՝ գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Հատկանշական է այն, որ ընթերցանության տեխնիկան հանդես է գալիս որպես ստուգման օբյեկտ: Ներկայացնելով ընթերցանության տեխնիկայի բաղադրիչները, ատենախոսը ներկայացնում է նրա ցուցանիշները: Ընդհանուր առմամբ, ատենախոսը ներկայացնում է թեստի դրական և բացասական կողմերը, առանձնացնում է այն տեսակները, որոնք հնարավոր չէ թեստավորել, վերլուծում է ընթերցանության ստուգման ենթակա համապատասխան օբյեկտները:

Չորրորդ՝ «Սովորողների հայտորոշիչ ստուգումը թեստավորման միջոցով (հայտորոշիչ/ նախափորձարարական թեստավորում)» ենթազխում ատենախոսն ներկայացնում է սովորողների հայտորոշիչ թեստավորման արդյունքները, ինչպես նաև թեստավորման ընթացակարգը, պայմանները, ժամկետները, հայտորոշիչ թեստի առաջադրանքները և ստուգման չափանիշները: Նա առաջարկում է հինգ առաջադրանքն պարունակող թեստ՝ համապատասխան օրինակներով: Ուշադրության է արժանի թեստավորման արդյունքում սովորողների սխալների վերլուծությունը, որի արդյունքում ատենախոսին հաջողվել է բացահայտել մի շարք տիպական սխալներ, սահմանել սովորողների մոտ առաջ եկող հիմնական դժվարությունները,

Ատենախոսության երրորդ՝ «Տեքստերի ընդհանուր բովանդակության ընկալման ստուգման մեթոդական համակարգի մշակում» խորագրով գլուխը կառուցված է երեք ենթազխից: Առաջին՝ «Մասնագիտական տեքստերի բովանդակության ստուգման տեսամեթոդական հիմունքները և ռազմավարությունը» ենթազխում Ամալյա Պետրոսյանը վերլուծում է ընթերցանության երեք հիմնական փուլերը՝ նախաընթերցանական, բուն

ընթերցանական և հետընթերցանական, ինչպես նաև յուրաքանչյուր փուլում առաջարկվող մի շարք ռազմավարություններ:

Երկրորդ՝ «Սովորողների գիտելիքների և ընթերցանության կարողությունների ստուգումը թեստավորման միջոցով» ենթագլխում ատենախոսն ուսումնասիրության առաջկա է դարձնում ընթերցանության բովանդակության ընկալումը ստուգելու համար նախատեսված թեստերը: Համապատասխան վերլուծությամբ նա եզրահանգում է, որ ընթերցածի բովանդակության ընկալումն իրականանում է գլխավորապես տեքստերի պարբերությունների ընկալման հիման վրա:

Երրորդ՝ «Ընթերցանության ընդհանուր բովանդակության ըմբռնումը ստուգող մեթոդական համակարգի փորձարկում և արդյունքների վերլուծություն» ենթագլխում Ամալյա Պետրոսյանը ներկայացնում է ընթերցանության ընդհանուր բովանդակության ըմբռնումը ստուգող մեթոդական համակարգի արդյունավետության հիմնավորման նպատակով իրականացված փորձարարական հետազոտության ընթացքը և արդյունքների վերլուծությունը:

Կարելի է պնդել, որ կատարված է օգտակար հետազոտություն: Ատենախոսության լեզուն և ոճը համապատասխանում են ակադեմիական գրագրության պահանջներին: Հոդվածները և սեղմագիրն արտոցոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը: Դրական գնահատելով Ամալյա Պետրոսյանի իրականացրած հետազոտության արդյունքները, կարելի է առանձանցնել որոշ դիտարկումներ²

1. Կարելի էր իջեցնել հղումը տողատակ (Фоломкина С. К., Некоторые вопросы обучения чтению на иностранном языке в неязыковом вузе. Иностранные языки в высшей школе. Вып. 6. М. 1971. С.3–12):

2. համակցման (matching) տեխնիկաներով՝ բառակապակցության մեջ պետք է (matching) եզրույթը թարգմանել համապատասխանեցում:

3. «Օտար լեզվով ընթերցանության բովանդակության ստուգման ավանդական ձևերի կողքին լայնորեն կիրառվում են նաև այլընտրանքային տեխնոլոգիաներ, հատկապես թեստային համակարգը»: Կարելի է միտքը մանրամասնել, հստակորեն նշելով այլընտրանքային տեխնոլոգիաները:

4. Մեթոդաբանական հիմքում պետք է նշել գրականությունը՝ Sheils J., Würffel N., Wren S., Plurilingual Education in Europe. 50 Years of international co-operation. Language Policy Division և այլք),

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ գրախոսվող ատենախոսության հետազոտության թեման արդիական է, գիտական նորույթը, տեսական, գործնական նշանակությունը կասկած չեն հարուցում: Ստացված արդյունքները հավաստի են: Պաշտպանության ներկայացվող դրույթների և եզրակացությունների հիմնավորվածությունը թույլ է տալիս եզրահանգել, որ Ամայա Բաբկենի Պետրոսյանի «Գերմաներեն բնագրերի ընթերցանության բովանդակության ստուգման ռազմավարությունը ոչ լեզվական ֆակուլտետում» խորագրով թեկնածուական ատենախոսությունն արդիական է, ունի գիտական նորույթ, տեսական և գործնական նշանակություն, բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (գերմաներեն լեզու) մասնագիտության թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝

Ի. Կ. Կարապետյան

Ի. Կ. Կարապետյանի անդրագրությունը
հաստատում եմ:
ՀՊՄՀ-ի գիտ. քարտուղար

Մ. Իսպիրյան

06.07.2021թ.

